

Հ Ո Ւ Շ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան

15.02.2013թ.

Սույն Հուշագրով Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) և Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը (այսուհետ՝ Ոստիկանություն), ելնելով ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության, բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովման, վարչական իրավախախտումների նախականիման, կանխման, խափանման և բացահայտման, օրենսդրության արդյունավետ կիրառման խնդիրներից՝ համաձայնում են ներքոշարադրյալի վերաբերյալ.

1. Հանձնաժողովը մրցակցային օրենսդրության խախտման դեպքերի բացահայտման, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողության իր խնդիրների իրականացման նպատակով Ոստիկանություն է ուղարկում հնարավոր խախտումների վերաբերյալ անհրաժեշտ նյութեր արարքին քրեաիրավական գնահատական տալու և հնարավոր խախտման փաստը ստուգելու համար:

2. Սույն հուշագրի 1-ին կետով սահմանված կարգով Ոստիկանություն ուղարկվող նյութերը ներառում են հետևյալը՝

2.1 Հանձնաժողովի նախագահի գրությունը, որը ներառում է հայտնաբերված խախտման բնույթի, խախտված իրավական ակտ(եր)ի, կից ներկայացվող փաստաթղթերի և (կամ) այլ նյութերի վերաբերյալ տեղեկատվություն,

2.2 Գործի հանգամանքների կապակցությամբ Հանձնաժողովի կայացրած որոշման պատճենը (առկայության դեպքում),

2.3 Տնտեսվարող սուբյեկտի, պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի, այլ աշխատակիցների կամ այլ անձանց գրավոր առարկությունները կամ բացատրությունները (առկայության դեպքում),

2.4 Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության, դիտանցման կամ ստուգման ընթացքում ձեռք բերված խախտման առարկան (առկայության դեպքում),

2.5 Անհրաժեշտության դեպքում՝ այլ նյութեր և փաստաթղթեր:

3. Ոստիկանությունը ստացված նյութերի վերլուծության հիման վրա օրենքով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ապահովում է նյութերի ստուգման լրիվությունն ու բազմակողմանիությունը,

3.1 Քրեական գործ հարուցելու կամ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին իրազեկում է Հանձնաժողովին՝ կցելով որոշման պատճենը,

3.2 Տեղեկատվություն է տրամադրում Հանձնաժողովին՝ քրեական գործի քննության արդյունքների վերաբերյալ,

3.3 Քրեական գործի նախաքննության կամ նյութերի նախապատրաստման ընթացքում վարչական իրավախախտում հայտնաբերելու դեպքում համապատասխան նյութերն ուղարկում է Հանձնաժողով՝ վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար,

3.4 Հասարակական կարգի ապահովման նպատակով, Հանձնաժողովի միջնորդությամբ մասնակցում է Հանձնաժողովի աշխատակիցների կողմից իրականացվող ուսումնասիրություններին, դիտանցումներին և ստուգումներին:

4. Հանձնաժողովի կողմից համապատասխան նյութերը և փաստաթղթերը Ոստիկանություն ուղարկելու, ինչպես նաև Հանձնաժողովի ու Ոստիկանության միջև տեղեկատվության փոխանակման հետ կապված և սույն հուշագրից բխող այլ աշխատանքների համակարգումն իրականացվում է Հանձնաժողովի և Ոստիկանության ներկայացուցիչների միջոցով:

Սույն հուշագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից, յուրաքանչյուր կողմին՝ մեկական օրինակ:

Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ**

Վ.Ս.ԳԱՍՊԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ա.Գ. ՇԱԲՈՅԱՆ